վրա։ Հեղինակը գտնում է, որ հանձարեղ արտիստի նկատմամբ արևմտահայ մտավորականության անտարբերությունը ուներ արտաքին, ցուցադրական բնույթ, և դրան տալիս է այնպիսի համոզիչ բացատրություն, **որը օգնում է հայ** մշակույթի մի շարք կենսական հարցերի պարզաբանմանը առհասարակ՝ կապված Ա. Արփիարյանի, Տ. Կամսարականի, Լ. Բաշալյանի և այլոց անունների հետ։ Գ. Ստեփանյանը փաստական տվյալներով ցույց է տալիս, թե ինչպիսի վտանգ էր ներկայացնում սուլթանական բռնապետության համար Ադամյան-արվեստագետը և քաղաքացին. պատահական չէր, որ արտիստի թաղումը Պոլսում ստացավ քաղաքական ցույցի բնույթ։

Աշխատության II հատորի վերջին բաժինը նվիրված է հայտնի թատերական գործիչ, ռեժիսյոր և դերասան Մ. Մնակյանի «Օսմանյան դրամատիկ թատրոնին», որը 1884 թ. սկսած, երեսուն տարի շարունակ, իր ներկայացումները տալիս էր հիմնականում թուրքերեն լեզվով, բայց որի ղեկավարը երբեք չի դադարել երազել մշտական հայ խմբի մասին և միշտ էլ օգտագործել է պատեհ առիթը՝ հայերեն ներկայացումներով հանդես գալու համար։ Իր շուրջը համախմբած հայերի հետ միասին Մնակյանը կարողացավ ավելի քան քառորդ դար կանգուն պահել թուրքական թատրոնը. պատահական չէ, որ թուրք ազգային թատրոնի հիմնադիրները նրա անունը արտասանում են խորին ակնածանքով և նրան համարում են իրենց ուսուցիչը։ Սակայն չպետք է մոռանալ և այն, որ Մնակյանը մինչև թուրքական թատրոնի գլուխն անցնելը 25 տարի անխզելիորեն կապված է եղել հայ ազգային թատրոնի հետ, համարվել է նրա ամենախոշոր ներկայացուցիչներից, որի անունը միշտ դրվել է Պետրոս Ադամյանի կողքին։

Գ. Ստեփանյանի քննարկվող աշխատության լեզուն պարզ է ու դյուրըմբռնելի, ու չնայած փաստական նյութի հարստությանը և «գերբեռնվածությանը», ընթերցվում է լարված հետաքրքրությամբ։ Երկու հատորն էլ ունեն օգտագործված աղբյուրների ու ծանոթագրությունների հարուստ, մեծ բարեխղճությամբ կազմված բաժիններ, որոնք ոչ միայն բարձրացնում են աշխատության ճանաչողական արժեքը, այլև ցույց են տալիս, թե փաստական ինչպիսի ամուր հիմքի վրա է խարսխված գիտական այս նշանակալից հետազոտությունը։

Նման գործը, իհարկե, չէր կարող զերծ մնալ նաև որոշ թերություններից, որոնցից մի քանիսը արդեն նշել ենք։ Կուզենայինք ավելացնել հետևյալը։ Գրքի II հատորի կառուցվածքն այնքան էլ հստակ չէ։ Այսպես, օրինակ, կարելի էր Ցասուլաճյանի գործունեությունն ամբողջությամբ ամփոփել մի բաժնում, իսկ «Մնակյան խմբի» մասին խոսել «Վարդովյան թատերախմբից» անմիջապես հետո, որովհետև դրանք միմյանց հաջորդած, իրար շաղկապված, նույնանման բնույթի երևույթներ են։ Սիրանույշի դիմապատկերը կարելի էր սահմանափակել արևմտահայ շրջանով, իսկ արտիստուհու գործունեությունը ռուսահայ թատրոնում՝ թողնել նրա պատմաբանին (ինչպես վարվել է հեղինակը Ադամյանի հետ), մանավանդ որ Սիրանույշի կովկասյան և ռուսաստանյան կյանքը գրքում ստացվել է թուցիկ և արտիստուհու մեծ արվեստի մասին լիակատար պատկերացում չի տալիս։ Աշխատությունը, ինչպես վերևում նշվեց, ծանրաբեռնված է բազմաթիվ ու ոչ այնքան կարևոր դեմքերին նվիրված հատվածներով, և այդ պատճառով էլ հեղինակը երբեմն կրկնել է իրեն, որովհետև ամեն անգամ հարկադրված է եղել խոսել նույնանման դեպքերի մասին, չնայած ամեն անգամ էլ ձգտել է նույն փաստը տալ նոր շարադրանքով։ Գ. Ստեփանյանի սոցիալական վերլուծություններին, որոնք հատկապես երևում են մշակութային գործիչների և նրանց արվեստի՝ կյանքի հետ ունեցած կապի բացահայտման ընթացքում, երբեմն պակասում է նրանց ստեղծագործության գեղագիտական մեկնաբանությունը։

Նշված թերությունները չեն նսեմացնում աշխատության ընդհանուր արժեքը։ Գ. Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» հետազոտությունը մնայուն ներդրում է հայ թատերագիտության մեջ։

Արվեստագիտ. դոկտոր Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հայ ռազմական արվեստի պատմությունից, Երևան, 1969, 218 էջ, գինը 83 կոպ.։

Գրախոսվող աշխատությունը ընդգրկում է մ. թ. ա. VI դարից մինչև մ. թ. VII դարի սկզբի հայ ռազմական արվեստի պատմությունը։ Բաղկացած է 10 գլխից և ներածությունից։ Առաջին գլխում («Ընդհանուր ակնարկ») հեղինակը տալիս է Հայկական լեռնաշխարհի ռազմաստրատեգիական նշանակությունը, նկարագրում զորքերի կազմակերպումը և սպառազինումը, մարտավարության եղանակը, վիրավորների բուժումը, Հայաստանի պաշտպանողական կա-

ուցումները և դրանց նշանակությունը։ Հաջորդ գլուխները վերաբերում են՝ ռազմա-ստրատեգիական մտքի ծագմանը հին Հայաստանում, որը հեղինակը կապում է առասպելական Հայկի և Բելի կռվի հետ, հայերի պայքարին Մարաստանի և Աքեմենյան Պարսկաստանի դեմ մ. թ. ա. VI դարում, հայերի մասնակցությանը Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մղված ճակատամարտերին, հայկական հողերի միավորման և կենտրոնացված պետություն ստեղծելու համար ու Հռոմի հարստահարման դեմ հայ ժողովրդի մղած պայքարին, III և IV դարերի հայ-պարսկական պատերազմներին, հայ ժողովրդի ազատագրական պատերազմներին V—VI դարերում և VII դարի սկզբին։

Մեր պատմագրության մեջ սա առաջին փորձն է՝ ցույց տալու հայերի ռազմական արվեստի ծագումն ու զարգացումը։ Անկասկած է, որ հեղինակը այս գրքի վրա աշխատել է երկար տարիներ, ի մի հավաքելով և ընդհանրացնելով հայ ու օտար մատենագիրների այն տեղեկությունները, ինչպես նաև պատմաբանների հետազոտությունները, որոնք առնչություն ունեն հայերի ռազմական արվեստի պատմության հետ։ Անշուշտ, այս թեմայով գրքի հրատարակումը ողջունելի է։ Բայց, ցավոք, գիրքը ունի լուրջ թերություններ, որոնք ընթերցողին կարող են գցել թյուրիմացության մեջ։

Ինչպես հայտնի է, ժամանակակից ռազմական արվեստը, որպես ռազմական գիտության հիմնական բաղկացուցիչ մասը, զբաղվում է պատերազմի, ռազմական օպերացիայի, կռվի նախապատրաստման և դրանք վարելու եղանակների ու ձևերի ուսումնասիրմամբ։ Նա ընդգրկում է ստրատեգիան, օպերատիվ արվեստը և տակտիկան, որոնք սերտորեն կապված են իրար հետ։ Իսկ այդ արվեստի պատմությունը, որը ռազմական պատմության մի մասն է, զբաղվում է պատերազմական գործողություններ վարելու եղանակների և ձևերի ծագման ու զարգացման հարցերով։ Հետևապես «Հայ ռազմական արվեստի պատմություն» գրքի հեղինակի հիմնական խնդիրը պետք է լիներ ուսումնասիրել հայերի մոտ այդ արվեստի զարգացման ընթացքը, նրա առանձնահատկությունները և բնորոշ գծերը, այսինքն՝ ցույց տալ հայերի ռազմական ստրատեգիայի և տակտիկայի զարգացման ընթացքը, սկսած մ. թ. ա. VI դարից մինչև VII դարի սկիզբը։

Եթե ուշադիր հետևենք հայերի վարած պատերազմներին, սկսած մ. թ. ա. VI դարից մինչև մարզպանական շրջանը ներառյալ, դժվար չի լինի նկատել, որ այդ բոլոր պատերազմները, բացառությամբ Տիգրան II-ի արշավանքի իր երկրի սահմաններից դուրս, հիմնականում տեղի են ունեցել բուն Հայաստանի տերիտորիայում յուրահատուկ ստրատեգիական պլանով. հայերը հանդիպում էին թշնամու զորքին իրենց սահմանի մոտ, որտեղ ճակատամարտ էին տալիս, հետո նահանջում էին Հայկական լեռնաշխարհի խորքերը, պահպանելով իրենց ուժերը և օգտագործելով երկրի տեղանքը, թշնամուն հասցնում էին նոր հարվածներ, մինչև որ նա թուլանա և նահանջի։ Նահանջող թշնամուն հայերը հետապնդում էին մինչև իրենց սահմանը, իսկ եթե պատահում էր, որ մտնում էին թշնամու պետության տերիտորիան, ապա շատ հեռու չէին գնում, շուտով վերադառնում էին և Փավստոս Բուզանդի դիպուկ արտահայտությամբ՝ «իրենց երկրի սահմաններին պահապան կանգնելով մեծ զգուշությամբ պահպանում էին» (Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, 1968, 4, ԻԷ)։

Հայերի այդ ստրատեգիայի սոցիալ-տնտեսական ու սոցիալ-քաղաքական հիմքերի, նրա դրական և բացասական կողմերի բացահայտումը պետք է լիներ դրախոսվող գրքի առաջին և հիմնական խնդիրը, մինչդեռ հեղինակը ռազմական արվեստի պատմության այս հիմնական հարցը շրջանցել է։ Նա մեթոդոլոգիական ճիշտ սկզբունքով չի մոտեցել ռազմական արվեստի պատմության երկրորդ հիմնական խնդրին՝ տակտիկայի զարգացմանը։ Իր գրքի առաջին գլխում Ս. Սարգսյանը առանձին բաժին է հատկացրել «մարտավարության եղանակին», որտեղ գրում է. «Սովորաբար մարտական կարգերը կազմել են աջ և ձախ թևերից, կենտրոնից և թիկունքի զորքերից» (էջ 17)։ Եվ, իսկապես, ըստ Ս. Սարգսյանի, ինչպես դյուցազնական Հայկի (էջ 30), այնպես էլ Ավարայրի ճակատամարտի (էջ 183) ժամանակ հայերի մարտական կարգը բաղկացած էր կենտրոնից, աջ և ձախ թևերից ու պահեստի ուժերից։ Մարտակարգի այդպիսի մակարդակին բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը, հասել են երկար դարերի ընթացքում, պատերազմ վարելու ձևերն ու եղանակները անընդհատ փոփոխվել են, ընդ որում փոփոխությունները կատարվել են պարզից դեպի բարդը, ստորինից դեպի բարձրագույնը։ Ճիշտ է, այդ փոփոխությունները կատարվում էին շատ դանդաղ. ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգում արտադրողական ուժերի և արտադրական տեխնիկայի դանդաղ զարգացման հետևանքով, բայց մի ընդհանուր «մարտավարության եղանակի» կամ «սովորական մարտական կարգի» մասին խոսելը սխալ է, քանի որ դրանով ժխտվում է ռազմական արվեստի պատմության գոյությունը, որի ուսումնասիրման առարկան մարտավարության եղանակների և ձևերի ծագումն ու զարգացումն է։ Հայ ռազմական արվեստի պատմությունը

ցույց տալու համար հեղինակը պետք է ուսումնասիրեր և իր աշխատության մեջ ցուցադրեր հայ ժողովրդի վարած այն պատերազմները և ճակատամարտերը, որտեղ ծագել են մարտավարության և կռվելու նոր, ավելի բարձր եղանակներ ու ձևեր։ Դրանց ընդհանրացումը կտար հայերի ռազմական արվեստի բնորոշ և յուրահատուկ գծերը, սակայն հեղինակը գնացել է ուրիշ ճանապարհներով. նա ժամանակագրական կարգով շարադրել է 50-ից ավելի պատերազմների, ճակատամարտերի, կռիվների պատմություն՝ առանց հաշվի առնելու նրանց նշանակությունը ռազմական արվեստի զարգացման համար, և ստացվել է ոչ թե ռազմական արվեստի, այլ պատերազմների պատմություն, որը ռազմական պատմության մի ուրիշ մասն է։ Սակայն այդ պատմությունն էլ նա շարադրել է ոչ թե խորը, ինքնուրույն ուսումնասիրությունից հետո, այլ այնպես, ինչպես մի որևէ տեղ կարդացել է, կամ էլ ենթադրաբար, խեղաթյուրելով այդ պատերազմների, ճակատամարտերի և կռիվների իսկական պատկերը։

Բերենք օրինակներ։

1. Նկարագրելով 331 թ. (մ. թ. ա.) Գավգամելայի ճակատամարտը, որտեղ Ալեքսանդր Մակեդոնացին վերջնական պարտության մատնեց պարսիկներին, Ս. Սարգսյանը գրում է. «Ալեքսանդր Մակեդոնացու զորքերում հաշվվում էր 50000—60000 մարդ» (էջ 51)։ «Պարսից զորքերը թվով զգալիորեն գերակշռել են հունական զորքերին։ Պարսկական բանակն ուներ 60—80 հազար մարդ հետևակ, 12000 հեծելազոր, 100 մարտական սայլակ և 15 մարտական փիղ» (էջ 52)։ Իսկ մինչ այդ խոսելով այդ ճակատամարտին հայերի մասնակցության մասին, նա գրում է. «Արրիանի և Կուրտիուս Ռուֆուսի տեղեկություններով, պարսից զորքերի հետ միասին, Գավգամելայի ճակատամարտում հայերը կռվել են Ալեքսանդր Մակեդոնացու դեմ։ Կուրտիուսի տվյալներով, այդ ճակատամարտին մասնակցել են հայկական 40000 հետևակ և 7000 հեծելազոր» (էջ 50, 51)։ Եվ, վերջապես, բացատրելով պարսիկների պարտության պատճառները, հեղինակը գրում է. «Գավգամելայի ճակատամարտում պարսից զորքերի աջ և ձախ թևերում, Ալեքսանդր Մակեդոնացու զորքերի դեմ արիաբար մարտնչել են Պարսից դաշնակից Մեծ Հայքի և Փոքր Հայքի, սկյութացիների և մյուս ժողովուրդների ու ցեղերի զորքերը։ Անկայունություն են հանդես բերել միմիայն կենտրոնի՝ գլխավորապես Դարեհ III-ի հրամանատարության տակ պարսիկներից կազմված զորքերը, որոնց փախուստը սկզբնավորում է ընդհանուր պարտությունը» (էջ 53)։ Ըստ հեղինակի ստացվում է այնպես, որ Գավգամելայում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ կռվում էին հիմնականում հայերը, որոնք կազմում էին պարսկական զորքի մեծ մասը (միջին հաշվով մոտ 60 տոկոս) և որ հայերը պարսիկներին ենթարկված մյուս ժողովուրդների զորքերի հետ միասին արիաբար մարտնչել են պարսիկների համար, մինչդեռ իրենք պարսիկները, դիմել են փախուստի։ Իրականում այսպես չի եղել։ Եթե հեղինակը իր ունեցած տեղեկությունները համեմատեր սկզբնաղբյուրների հետ, կտեսներ՝

ա) Կուրտիուսի տվյալները՝ հայկական 40000 հետևակի և 7000 հեծելազորի մասին, Գավգամելայի ճակատամարտին չեն վերաբերում։ Կուրտիուս Ռուֆուսի այդ վկայությունը ուրիշ կռվի՝ 333 թ. (մ. թ. ա.) Իսոսի ճակատամարտի մասին է (տե՛ս Квинт Курций Руф, История Александра Македонского, Москва, 1963, III, 2, 6։ Նկատենք, որ այս սխալ տեղեկությունը հեղինակը վերցրել է Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» գրքից, 1944, էջ 91, որը կրկնվում է նաև «Հայ ժողովրդի պատմության» բուհական դասագրքում, 1963, էջ 15)։

բ) Կամոզվեր, որ ոչ միայն հռոմեական զորավարների զեկուցագրերում, այլ ընդհանրապես հին դարերի հեղինակների մոտ թշնամու զորքերի թիվը չափազանցնելը սովորական երևույթ էր և այդ տվյալները ստուգման խիստ կարիք ունեն։ Այսպես, Արրիանոսի տվյալներով Գավգամելայում Դարեհ III-ը ուներ 40000 հեծյալ և 1000000 հետևակ զորք (Арриан, Поход Александра, М.—Л., 1962, III, 8, (6))։ Մինչդեռ հետազոտությունները ցույց են տալիս, որ պարսիկների ամբողջ զորքի թիվը 80000-ից ավել չի եղել։

Պարսիկների դեմ հունամակեդոնական պատերազմի մեր ժամանակի բոլոր հետազոտողները եկել են այն եզրակացության, որ պարսիկների պարտության պատճառներից մեկը այն էր, որ նրանց բանակը կազմված էր Պարսկաստանի կողմից հարստահարվող տարբեր ազգերի և ցեղերի պատկանող զինվորներից, որոնց համար պարսիկների կռիվը հարազատ գործ չէր։ Պատմագրության մեջ Գավգամելայի ճակատամարտը բավականին ուսումնասիրված է և նրա մասին կան պարզ և բոլորին մատչելի տեղեկություններ. չնայած դրան, հեղինակը նույնիսկ շփոթել է ճակատամարտին մասնակցած պարսկական հայտնի «Անմահների» գնդի («Մատյան գունդ») թիվը, 10000-ը դարձնելով 15000 (էջ 50)։ Ինչ վերաբերում է Գավգամելայում պարսիկների պարտության հիմնական

պատեառներին, պետք է ասել, որ դրանցից մեկը այն էր, որ այդ ճակատամարտում Ալեքսանդր Սակեդոնացին գործադրեց ավելի բարձր տակտիկական ձևեր և մարտավարման եղանակ, քան ունեին պարսիկները։

2. Երկրորդ ճակատամարտը, որի վրա ուզում ենք կանգ առնել, դա 68 թ. (մ. թ. ա.) Արածանիի ճակատամարտն է Տիգրան II-ի ժամանակ։ Ընդհանրապես մենք չունենք Տիգրան II-ի վարած պատերազմների ռազմական ուսումնասիրությունները։ Հ. Մանանդյանի «Տիգրան Բ և Հռոմը», ինչպես նաև Հ. Աստուրյանի «Քաղաքական վերարկերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմա 190 ևն ՆՔ մինչև 428 ՀՔ.» ուսումնասիրությունները ռազմական արվեստի տեսանկյունից չեն, ունեն չհիմնավորված եզրակացություններ։ Ս. Սարգսյանը, խոսելով Արածանիի ճակատամարտի վայրի մասին, տեղեկությունները քաղում է Հ. Մանանդյանից։ Սարգսյանը գրում է. «Դեպի Արտաշատ Լուկուլլոսի արշավելու ժամանակ հայերի և հռոմեական զորքերի միջև խոշոր և վճռական ճակատամարտ տեղի ունեցավ 68 թ. սեպտեմբերի կեսերին, երբ հռոմեական զորքերը փորձեցին անցնել Արածանի գետը, Բագավանից հյուսիս, այժմյան Ղարաքիլիսայից 25—30 կիլոմետր դեպի արևելք վայրում» (էջ 91)։

Այսպե՞ս է արդյոք։

Պլուտարքոսը, նկարագրելով Արածանիի ճակատամարտից հետո հռոմեացիների շարժումը դեպի Արտաշատ, հաղորդում է հետևյալը. «սրանք դժվարությամբ էին անցնում գետանցքներով», «Ճակատամարտից հետո հռոմեական զինվորները մի քանի օր գնում էին Լուկուլլոսի հետևից, բայց հետո ընդդիմացան և նա նահանջեց» (Плутарх, Сравнительныя жизнеописания, С. Пет., 1892, էջ 87, 88)։ Արածանի գետի այն մասը, որը հեղինակը ցույց է տալիս իբրև ճակատամարտի տեղ, գտնվում է Հայկական պարի հարավային փեշերի մոտ, այդտեղից մինչև այդ զանգվածի լեռնանցքները, որոնցով պետք է անցնեին հռոմեացիները Արտաշատ գնալու համար, չկա մի այնպիսի գետ, որը դժվարություն պատճառեր զորքի անցնելուն։ Այդտեղ կան միայն փոքրիկ առվակներ։ Բացի դրանից, ճակատամարտի այդ ենթադրական տեղից մինչև Կուջաղի լեռնանցքը, Արտաշատի ճանապարհի վրա, ուղիղ գծով 42—43 կիլոմետր է, իսկ սովորական ճանապարհով՝ ոչ ավելի 60—65, այսինքն 2 օրվա ճանապարհ է։ Մինչդեռ ըստ Պլուտարքոսի հռոմեացիները ճակատամարտից հետո հետապնդել են նահանջող զորքին, որից հետո մի քանի օր էլ շարժվել դեպի Արտաշատ և միայն այն ժամանակ մոտեցել Հայկական պարին։ Կան և ուրիշ փաստեր, բայց այս երկուսի հիման վրա էլ կարելի է ենթադրել, որ ճակատամարտը ավելի հեռու է եղել Հայկական պարից, քան ցույց է տվել հեղինակը։ Չորոշելով ճակատամարտի ճիշտ տեղը, հնարավոր չէ լրիվ պատկերացում կազմել կռվի ընթացքի և զորքերի տեղադրման մասին, որ, ինչպես երևում է, հեղինակին առանձնապես չի մտահոգել. նա գրում է. «Հռոմեացիների շուրջ 50 հազարանոց բանակի դեմ է կանգնել (խոսքը Արածանիի ճակատամարտի մասին է) հայոց, Իբերիայի, Ատրպատականի և Մարդերի՝ մոտ 30—35 հազար հեծելազորը՝ Տիգրան II-ի գլխավորությամբ։ Իսկ հետևակազորը շատ էր ետ մնացել, որովհետև ընդունակ չի եղել սրընթաց հեծելազորի հետևից մարտադաշտ հասնել» (էջ 94), իսկ այդ նույն ճակատամարտի սխեմայում (էջ 92) նա ցույց է տալիս հռոմեացիների դեմ կռվող հայկական զորքի մարտակարգը, որի կենտրոնում գտնվում է հետևակը։

Վերջապես մի դիտողություն ևս. հեղինակը գրում է. «Մարտ վարելու այդ եղանակները, որոնք մշակվել և կիրառվել են 68 թ. Լուկուլլոսի դեմ մղված պատերազմներում, տասնհինգ տարի հետո կրկնեց պարթև զորավար Սուրենը Խարանի մոտ, Կրասոսի դեմ մղված ճակատամարտում» (էջ 98)։ Բանն այն է, որ պատերազմ վարելու այդ եղանակը ունի ավելի հին պատմություն, քան նա է կարծում։ Այդպես էին կռվում ուժեղ թշնամու դեմ դեռ մեր հեռավոր նախորդները՝ ուրարտացիները։ 858 թ. (մ. թ. ա.) ուրարտացիների թագավոր Արամը հենց այս եղանակով կռվեց ասորեստանցիների դեմ (Е. Разин, История военного искусства, Москва, 1955, էջ 70)։

3. Երրորդը Ավարայրի ճակատամարտն է, հայ ազգային ազատագրական պայքարի գագաթնակետը։ Այդ ճակատամարտի տեղը, ընթացքն ու ելքը, հայկական զորքերի թիվն ու մարտակարգը Ս. Սարգսյանը այնքան է աղավաղել ու խճճել, որ իսկական Ավարայրից ոչինչ չի մնացել։ Ըստ Ս. Սարգսյանի հայկական զորքը մայիսի 20-ին կամ 21-ին դուրս է եկել Արտաշատից և 25-ին հասել Ավարայրի դաշտը, ըստ որում հեծելազորը և հետևակը տարբեր ժամանակ են տեղ հասել (էջ 168)։ Դա ճիշտ չէ. հայկական զորքը Արտաշատից դուրս է եկել 451 թ. ապրիլին և մի քանի օրից հետո հասել Արտազ գավառը, իսկ մայիսի 25-ին այդտեղից մոտեցել է պարսիկների բանակատեղին՝ նրանց հետ ճակատամարտելու նպատակով։ Այս ամենը պարզվում է, ոչ միայն Եղիշեի և Ղ. Փարպեցու գործերի ուսումնասիրությունից, այլև XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հաղորդածից. «Եւ անցեալ Արտազ գաւառ յետ ամսօրեայ աւուրց եղև խմբումն մեծ

պատերազմին յորում պսակեցավ սուրբն Վարդան այլովք ընկերօք» (Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 62)։ Ինչ վերաբերում է հեծելազորի և հետևակի տարբեր ժամանակ Ավարայրի դաշտ հասնելուն, դա էլ այդպես չէ։ Նախ ո՛չ Եղիշեն և ո՛չ էլ Ղ. Փարպեցին նման բան չեն ասում, երկրորդ՝ հայերի հրամանատարությունը առաջին անգամը չէր, որ կազմակերպում էր հետևակի և հեծելազորի միատեղ երթը, և ի վիճակի էր լուծել այդ հասարակ ռազմական խնդիրը։

Ճակատամարտի տեղի մասին Ս. Սարգսյանը գրում է հետևյալը. հայկական զորքը «հասնում է Ավարայրի դաշտը և կանգ առնում Տղմուտ (Աղ-չայ) գետի ձախ ափին, որի աջ ափին արդեն բանակ էր դրել պարսից զորքը» (էջ 186)։ Իսկ Ավարայրի ճակատամարտի սխեմայում (192 և 193 էջերի մեջ) հեղինակը ճակատամարտի տեղը ցույց է տալիս Մակու-չայի վրա, որը գտնվում է Տղմուտից (Աղ-չայից) 40—45 կիլոմետր հյուսիս։ Չբավարարվելով դրանով, Ս. Սարգսյանը հորինում է մի նոր, երրորդ տեղ։ Նա գրում է. «Հայկական բանակի հրամանատարությունը ճակատամարտի վայրն ընտրելիս կարևոր նշանակություն չի տվել տեղանքին։ Նա անուշադրության է մատնել այն, որ պարսից վիթխարի բանակը զուրկ է մանևրելու հնարավորությունից, որովհետև նրա աջ թևում էին Զիլբեր-չայի հովտի ճահիճները, իսկ ձախ թևով ամուր սեղմվել էր Կարադաղ լեռների արևելյան լանջերին» (էջ 199)։ Այստեղ հեղինակը շփոթել է Ավարայրի ճակատամարտի տեղը, արևելքն ու արևմուտքը՝ աջ ու ձախ թևերը։ Զիլբեր-չայի հովիտը և Կարադաղ լեռների արևելյան լանջերը գտնվում են Տղմուտից 50—100 կիլոմետր հարավ-արևելք։ Որպեսզի նրանք լինեին պարսկական բանակի աջ և ձախ թևերում, ինչպես Ս. Սարգսյանն է գրում, պարսական զորքը պետք է ուներ 60—70 կիլոմետր ճակատ և հարձակվեր ետ, դեպի Թավրիզ և ոչ դեպի Արտաշատ։ «Տղմուտ գետի աջ ափին, 15—18 կմ լայնությամբ, Նյուսալավուրտը ստեղծում է ամուր պաշտպանություն՝ փորելով անանցանելի փոսեր և կառուցելով պաշտպանողական պատնեշներ» (էջ 190)։ Իսկ այս տողերից և թե՛ ճակատամարտի սխեմայից պարզ հետևում է, որ ըստ հեղինակի հայերի և պարսիկների միջև Ավարայրում մարտը տեղի է ունեցել մինչև 18 կիլոմետր երկարություն ունեցող ճակատով։ Սա էլ ճիշտ չէ։ V դարում, ինչպես և մինչ այդ և դեռ շատ դարեր հետո ճակատամարտերը տեղի էին ունենում փոքր, սահմանափակ տարածության վրա, ոչ ավել 1—4 կմ երկարություն ունեցող ճակատով։ Այսպես, 333 թ. (մ. թ. ա.) Իսոսի ճակատամարտում բախումը տեղի ունեցավ 4 կիլոմետրի վրա, 216 թ. (մ. թ. ա.) հայտնի Կաննում՝ 2 կիլոմետրի, 357 թ. Արգենտորատի (Ստրասբուրգի) մոտ գերմանացիների և հռոմեացիների միջև՝ 2,5 կիլոմետրի վրա, իսկ 1812 թ. Բորոդինոյում, չնայած կենքը և կռվելու ձևերը փոփոխվել էին, ճակատամարտը տեղի ունեցավ մոտ 7 կմ երկարություն ունեցող տարածության վրա։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ավարայրում հայերի ու պարսիկների բախման ճակատի երկարությունը եղել է մոտ 3 կմ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4)։

Հայ և պարսիկ զորքերի թվի մասին Ս. Սարգսյանը գրում է. «Ինչպես Եղիշեն, նույնպես և Փարպեցին վկայում են, որ Ավարայրի ճակատամարտում հայկական բանակը կազմված էր 66 հազար մարդուց, իսկ պարսկականը՝ ավելի քան 200 հազար»։ Մեզ թվում է, որ այս թվերը հավաստի չեն (էջ 166)։

1. Որ հայկական զորքը Ավարայրում ունեցել է 66000 հետևակ և հեծելազոր, այդ վկայում է միայն Եղիշեն, Ղազար Փարպեցին հայկական զորքի թվի մասին վկայություն չունի։ Ս. Սարգսյանը Եղիշեի հետ համաձայն չէ. ըստ նրա հայերը Ավարայրում ունեցել են 35—40 հազար զինվոր (էջ 188)։ Իր կարծիքը հիմնավորելու համար Ս. Սարգսյանը բերում է տարբեր փաստարկումներ առանց նրանց մեջ խորանալու։ Այսպես՝ վկայակոչելով Ն. Ադոնցին, նա գրում է. «Մարզպանական շրջանում հայկական հեծելազորը կրճատվել է և հասցվել մինչև 30 հազարի» (էջ 187)։ Ն. Ադոնցը այս գրել է հիմնվելով Սեբեոսի և Պ. Կեսարացու հաղորդածների վրա, որոնք վերաբերում են ոչ թե 451 թ. Ավարայրի ճակատամարտի ժամանակին, այլ 482 և 531 թթ.։ Տարբերությունը քիչ չէ։ Կա՞ որևէ պատճառ Եղիշեի վկայությունը համարելու «ոչ հավաստի»։ Ինչպես ասացինք, հին դարերում հեղինակները սովորություն ունեին չափազանցնել թշնամու զորքի թիվը, նրանք միևնույն ժամանակ քչացնում էին սեփականը, որպեսզի հաղթության դեպքում ընդգծեն իրենց առավելությունը, իսկ պարտության դեպքում՝ պատճառաբանեն։ Հարց է ծագում, Եղիշեն ի՞նչ միտումով պետք է ավելացներ հայկական զորքի թիվը, երբ ընդհանրապես անում էին հակառակը։

2. Ո՛չ Եղիշեն և ո՛չ էլ Ղ. Փարպեցին ոչ մի տեղ չեն վկայում, թե պարսիկները Ավարայրում ունեցել են «ավելի քան 200000 զորք»։

Ավարայրի դաշտում հայկական զորքի մարտակարգի և նրա հրամանատարների մասին Ս. Սարգսյանը գրում է. «Նկատի ունենալով այն, որ հայկական գնդերի թվի և նրանց հրամանատարների մասին պատմիչների մոտ

կան տարբեր կարծիքներ, ուստի նպատակահարմար ենք համարում մեջ բերել պատմիչների համապատասխան հատվածները ռազմական արվեստի տեսանկյունով այն ճշտորեն մեկնաբանելու համար» (էջ 190)։ Ըստ Ս. Սարգսյանի, ահա Ղ. Փարպեցու մի ցուցմունք՝ հայկական զորքի մարտակարգի և նրանց հրամանատարների տեղի մասին Ավարայրի ճակատամարտում. «Պատերազմի ժամը հասնելով, պարսից գնդերին տեսնում էին նկատված կարգին համաձայն։ Կարգում էր և իր գունդը հայոց Հրանելի Վարդան զորավարը... աջ կողմին զորաղլուխ կարգեց Արշարունյաց Կամսարական Արշավիր իշխանին։ Ձախ կողմը տվեց Խորեն Խորխոռունուն... իսկ ինքը՝ հայոց զորավար սուրբ Վարդանը պատրաստվեց, որ մեջտեղի վրա հարձակվի» (էջ 191)։ Հեղինակը ընկել է թյուրիմացության մեջ։ Ղազար Փարպեցու այս հաղորդումը վերաբերում է 450 թ. Խալխալի ճակատամարտին և ոչ թե 451 թ. Ավարայրի (տե՛ս Ղ. Փարպեցի, II, Լե)։ Մի կողմից ընկնելով թյուրիմացության մեջ, մյուս կողմից սխալ մեկնաբանելով Եղիշեի և Ղ. Փարպեցու մյուս ցուցմունքները, Ս. Սարգսյանը բանը հասցնում է այնտեղ, որ հայկական զորքի մարտակարգի մասերի հրամանատարներից ոչ մեկը չի մնում իր տեղում։ Աջ թևի հրամանատար Խորեն Խորխոռունու տեղը ցույց է տալիս Արշավիր Արշարունուն, կենտրոնում Ներշապուհ Արծրունու փոխարեն՝ Վահան Արծրունուն, ձախ թևում Թաթուլ Վանանդացու տեղը՝ Վարդան Մամիկոնյանին, իսկ ամբողջ հայկական զորքը բողնում է առանց ընդհանուր հրամանատարի (տե՛ս 192, 193 էջերը և սխեման նրանց միջև)։

Աշխատության մեջ սխալ են ցույց տրված նաև ճակատամարտի ընթացքը և ելքը։ Հեղինակը, փոքանակ դիտականորեն ուսումնասիրելու մեր մատենագիրների հաղորդումները, ցույց տալու այդ ճակատամարտի բովանդակությունը, առանց որևէ հիմքի շարունակ (7 անգամ) կրկնում է՝ աշխարհազորայինները «փախուստի դիմեցին» (էջ 191—200)։ Փախուստի մասին առաջին անգամ գրել է Ղ. Փարպեցին։ Ըստ Փարպեցու «սկզբում պարսից զորքին փախցրին նրանք» (հայերը), որից հետո հայերը «դեպի փախուստ դարձած՝ հավիտենական կերպով կորան» (Ղ. Փարպեցի, II, Լթ)։ Ինչպես կարող էին փախած պարսիկները հենց նույն տեղում, իրենց հերթին, փախցնել հայերին, կամ հայերը ինչու պետք է փախչեին, երբ թշնամին ինքն էր փախչում։ Ղազար Փարպեցու մոտ «փախուստը» դա նահանջն է։ Դրանք տարբեր բաներ են ռազմական արվեստում։ Ի՞նչ է նշանակում կռվի դաշտից փախչել։ Երբ զինվորը, ստորաբաժանումը, զինվորական մասը կամ նույնիսկ միավորումը, չկատարելով իր մարտական խնդիրը (առաջադրանքը), լքում է կռվի դաշտը, դա կոչվում է փախուստ։ Երբ այդպիսի փախստական զորքին հասնում է հետապնդող թշնամին, նրանք կռվից խուսափելով նորից են փախչում։ Իսկ ի՞նչ արեց հայկական զորքը Ավարայրում և Ավարայրից հետո։ Ավարայրի ճակատամարտում հայկական զորքը ցույց տվեց հմուտ մարտունակություն և բարձր բարոյական ոգի։ Նա պարսկական նետերի տակ անցավ Տղմուտը և թշնամու հետ ձեռնամարտի բռնվեց։ Մի ամբողջ օր հայերը համառորեն կռվեցին թվով գերակշռող պարսիկների դեմ նրանց մարտակարգի տեղը, թշնամուն հասցրին մեծ կորուստներ և բարոյալքեցին նրան։ Իրենց մարտական խնդիրը կատարելուց հետո հայերը գիշերը նահանջեցին երկրի խորքը։ Իսկ երբ պարսիկները վերականգնեցին իրենց կորուստները («...Շատ հեծելազոր եկավ ավելացավ սպանվածների տեղը, և զորքը թիվը էլի առաջվա չափ եղավ», Եղիշե, Վարդանանց պատմությունը, 1958, էջ 144), շարժվեցին դեպի Հայաստանի խորքերը։ Ի՞նչ ստացվեց դրանից. Տայքում հայերը դուրս եկան պարսիկների դեմ, «բախվեցին միմյանց և հզորապես հաղթելով՝ ջարդեցին պարսից գնդի զորությունը. նրանցից շատերին կոտորեցին» (Եղիշե, էջ 115)։ «Կոտորեցին Պարսից զորքերից և ետ դարձնելով փախցրին. նրանցից շատերին այնտեղ շինամիջում կոտորեցին» (Ղ. Փարպեցի, II, ԽԱ)։ Այսպես եղավ Տայքում, այսպես եղավ Տմորիքում, Արցախում, Միջնաշխարհում, եթե հայերի այս գործողությունը «փախուստ» է, ապա ո՞րն է նահանջման մանները ընդհանրապես և հայերի մոտ՝ մասնավորապես։ Չէ որ դա նրանց կռվելու ընդունված ձևն էր դեռ շատ հնուց։ Շարունակելով իր մտքերը, հեղինակը գրում է. «Կազմալուծված այդ գնդերը, հեռանալով ճակատամարտի վայրից, ապաստանում են հայերի երկրի անառիկ վայրերում։ Պարսկական զորքը հետապնդում է նրանց, փորձելով ոչնչացնել բոլորին» (էջ 196—197)։ Հայկական գնդերը չեն կազմալուծվել, նրանք նահանջել են, ղեկավարվելով այդ պատերազմը վարելու իրենց պլանով։ Պարսկական զորքը նահանջող հայերին չի հետապնդել, նրանց առաջխաղացումը եղել է ուշ, իրենց կորուստները վերականգնելուց հետո, ինչպես ասացինք վերևում։ Ժակ դը Մորգանը գրել է. «...իրանցիները այսչափ դիմադրությունից զարմացած, կանգ կառնեն իրենց կորուստները դարմանելու համար» (Morgan, Histoire du Peuple Armenien, Paris, 1919, էջ 113)։

«Ըստ Եղիշեի և Ղազար Փարպեցու, հայկական բանակը Ավարայրի ճակատամարտում

կորցրեց 1026 մարդ, իսկ պարսկական բանակը՝ 3544 մարդ»—գրում է հեղինակը (էջ 197. Եղիշեն և Փարպեցին հայերի կորուստը ցույց են տալիս 1036 մարդ և ոչ՝ 1026)։ «Պատմիչները այդ թվերը միտումնավոր կերպով փոքրացրել են կամ չեն կարողացել ճիշտ տվյալներ տալ» (էջ 197),— եզրակացնում է նա։ Ինչո՞ւ պատմիչները պետք է փոքրացնեին այդ տվյալները, կամ մի՞թե այդ կորուստները քիչ են։ Բոլոր ճակատամարտերը չեն, որ լինում են կաններ կամ խարաններ։ Մարաթոնում 490 թ. (մ. թ. ա.) հույները տվեցին 192 սպանված և մոտ 800 վիրավոր։ Արդենտորոտի մոտ, 357 թ. հռոմեացիները տվեցին մոտ 250 սպանված և 1000 վիրավոր։ Մի՞թե այդ ճակատամարտերը վճռական չէին և պատմության ու ռազմական արվեստի մեջ մեծ նշանակություն չունեն։ Եթե Ավարայրի ճակատամարտում սպանվածների թվին ավելացնենք վիրավորվածներինը, ապա պարսիկների կորուստը կլինի ավելի քան 17500, հայերինը՝ մոտ 5200 մարդ։ Այս թվերի բացարձակ նշանակությունը և նրանց հարաբերությունը ցույց են տալիս ճակատամարտի ընթացքը և հայերի համար բարեհաջող ելքը։ Ավարայրի ճակատամարտում ապստամբ հայերը լրիվ կատարեցին իրենց ռազմական խնդիրը, պարսիկներին հասցրին մեծ կորուստներ, միևնույն ժամանակ պահպանեցին իրենց ուժերը ու պայքարը շարունակելու հաստատակամությունը։ Իսկ պարսիկները համոզվեցին, որ այդ կռիվը իրենց համար անհեռանկարային է։ Այս է Ավարայրի հիմնական նշանակությունը։

Այստեղ հնարավոր չէ ցույց տալ այն բոլոր սխալներն ու աղավաղումները, որ կան Գավղամելայի, Արածանիի և առանձնապես Ավարայրի ճակատամարտերի նկարագրության մեջ։ Ասենք միայն, որ այդ նույն մակարդակով են նկարագրված մյուս բոլոր ճակատամարտերը, որոնց մասին խոսում է հեղինակը։

Ռազմա-տեսական (աշխատությունում գրված է ռազմա-տակտիկական) մտքի ծագումը Հայաստանում Ս. Սարգսյանը կապում է դյուցազնական Հայկի և Բելի կռվի հետ ըստ Խորենացու հաղորդածի (էջ 28)։ Դա դիտական մոտեցում չէ հարցին։ Ռազմական արվեստի, ինչպես նաև պատերազմների պատմությունը հետազոտման համար հիմք է ընդունում միայն կոնկրետ կռիվը, ճակատամարտը, պատերազմը կամ նրանց պատմությունը և ոչ թե ավանդությունը։ Ս. Սարգսյանը գրում է. «Չնայած մեզ հայտնի չէ ավանդության ստեղծման ժամանակը, սակայն անվիճելի է, որ մարտ վարելու տակտիկական այն եղանակը և մարտակարգ կառուցելու այն ձևը, որ նկարագրում է Խորենացին, հայտնի էին նրա ժամանակի հայ զինվորականներին» (էջ 28)։ Խորենացին իր «Հայոց պատմությունը» գրել է V դարում։ Այդ ժամանակ հայերը ունեին երկար դարերի ռազմական փորձ և ծանոթ էին ժամանակակից առաջավոր ռազմական մտքին։ Հիշենք, որ V դարում գոյություն ունեին Քսենոփոնի (IV դար մ. թ. ա.), Օնիսանդրոսի (I դար), Վեգետիոսի (IV դար) և ուրիշ հեղինակների ռազմա-տեսական գործերը։ Պարզ է, որ հայ զինվորականներին V դարում մարտ վարելու ավելի բարձր ձևեր էին հայտնի, քան այն, որը ցույց է տրված Հայկի և Բելի կռվում։ Ս. Սարգսյանը գրում է. «Բաբելոնի դեմ Մարաստանի մղած պատերազմում պարսկական և մարական հետևակի հետևից շարժվել է հայոց հետևակը, որը կազմված էր վահանակիրներից և աղեղնավորներից։ Հայկական զորքերը, ինչպես երևում է, պարսկականի նմանությամբ կազմված են եղել լոխերով և տաքսիաներով» հետևակը, որը կազմված էր վահանակիրներից պարսիկների հետ միասին մի ընդհանուր Ցրշնամու դեմ դեռ չի նշանակում, որ նրանք ընդունել են պարսիկների զորքերի կազմած ձևը և Ս. Սարգսյանի «ինչպես երևում է» ենթադրությունը փաստ չէ։ Ըստ Ս. Սարգսյանի ոչ միայն պարսկական զորքի կառուցվածքի ձևերը, այլև նրանց ռազմական արվեստն էլ արմատավորվել են հայկական զորքում։ Նա ընդհանրացնում է. «Այդպես են արմատավորվել մարտակարգի կառուցման մեթոդները և պարսկական զորքերի մարտերի տակտիկական եղանակները հայկական զորքերում Կյուրոս Աքեմենյանի ժամանակ» (էջ 36)։ Իհարկե, հայերը, ինչպես այդ անում են բոլոր ժողովուրդները, ընդօրինակել են ռազմական գործում իրենց հարևաններից այն, ինչ իրենց օգտավետ է եղել, բայց դա չի նշանակում, թե ուրիշի ռազմական արվեստն է հայերի մոտ արմատավորվել։ Եթե Ս. Սարգսյանը ուսումնասիրեր ուրարտացիների ռազմական գործը, նա կտեսներ, որ հայերի ռազմական միտքը, նրանց ստրատեգիան, տակտիկան, զենքը, զորքի կառուցվածքը, պաշտպանողական կառուցումները ուրարտական ռազմական արվեստի հետագա զարգացումն են։

Հայկական լեռնաշխարհի ռազմա-ստրատեգիական նշանակությունը հեղինակը ցույց է տալիս 10—11 էջերում հետևյալ մեջբերումով. «Այնքան, ինչքան նրան (Հայկական լեռնաշխարհին) տիրողն իշխել է Քուռի հովտի, Ադրբեջանի տափաստանի, Միջագետքի հարթավայրի և, վերջապես, Անատոլիայի դաշտավայրի վրա,— գրում է Գուրկո Կրյաժինը,— հենց այդ պատճառով էլ մենք տեսնում ենք, որ հազարամյակների ընթացքում Արևմուտքի և Արևելքի մեծ պետությունները կատաղի կռիվներ են մղել իրար հետ Հայաստանին տիրելու համար» (էջ

10)։ Աշխարհագրական դիրքը ժողովուրդների կյանքում և ռազմական գործում քիչ նշանակություն չունի, բայց ամեն ինչ չի կարելի բացատրել այդ դիրքով։ Հայաստանին տիրելու համար հազարամյակների ընթացքում եղած կռիվների հիմնական պատճառները պետք է փնտրել ոչ թե միայն նրա աշխարհագրական դիրքի, այլ առաջին հերթին նրա տնտեսական, քաղաքական և ռազմական դրության մեջ։ Գրախոսվող գրքը հեղինակի բացատրությունը թերի է ու միակողմանի։

«Հայ ռազմական արվեստի պատմությունից» աշխատությունը ընդգրկում է մոտ 1200 տարվա պատմություն։ Այդ ընթացքում ռազմական արվեստը զարգացել է երկու հիմնական սոցիալ-տնտեսական հասարակարգում՝ ստրկատիրական և ֆեոդալական (ավելի ճիշտ՝ վաղ ֆեոդալական)։ Եվ այդ պատճառով նա պետք է բաժանվեր երկու հիմնական գլխի՝ ստրկատիրական հասարակարգի և վաղ ֆեոդալական շրջանի ռազմական արվեստի պատմության։ Հեղինակը, սակայն, չի շրջարաժանում պատերազմների պատմությունը, բավարարվելով միայն ճակատամարտերը ըստ փուլերի բաժանելով, ընդ որում Հոանդեայի ճակատամարտում մոռացել է ցույց տալ I փուլը, նկարագրությունը սկսելով ուղղակի II փուլից (էջ 130)։

Աշխատության մեջ ճակատամարտերի, պատերազմների և նույնիսկ առանձին գլուխների վերնագրերը չեն համապատասխանում ռազմական արվեստի պատմության մեջ ընդունված ձևերին։ Այսպես՝ «Լուկուլլոսի արշավանքը Արտաշատ» (էջ 87) գրելու փոխարեն նպատակահարմար կլիներ գրել «Արածանիի ճակատամարտը», «Կրասոսի արշավանքը Պարթևստան և Արտավազդ II-ը» (էջ 109) գրելու փոխարեն՝ «54—53 թթ. (մ. թ. ա.) հռոմեա-պարթևական պատերազմը և Հայաստանը»։ Ութերորդ գլուխը հեղինակը վերնագրել է. «Երևանամյա պատերազմը։ Դասակարգային պայքարի սրումը Հայաստանում։ Հայ ժողովրդի պայքարը իր անկախության համար» (էջ 160)։

Ռազմական արվեստի համար «դասակարգային պայքարի սրման» նշանակությունը ցույց տալու համար նա նշում է միայն այն, որ օգտվելով «Հայաստանում դասակարգային պայքարի հետևանքով տիրող խառնաշփոթությունից. Շապուհ II-ը 364 թ. նոր արշավանք սկսեց ամբողջ Հայաստանը նվաճելու համար» (էջ 161) և ուրիշ ոչինչ։

Աշխատության մեջ շատ են ոչ ճիշտ, հակասական ու անտրամաբանական մտքերը. այսպես, 10-րդ էջում կարդում ենք՝ «Հայաստանի քաղաքական կյանքը հաճախակի փոխվել է, փոփոխվել են նաև Հայկական լեռնաշխարհի սահմանները։ Հայկական լեռնաշխարհի սահմանները միշտ նույնն են եղել, նրանք չէին կարող փոփոխվել։ Խոսելով 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտում հայկական զորքերի պարտության պատճառների մասին, հեղինակը գրում է. «Մանրազնին հետախուզության բացակայությունը հնարավորություն չի տվել Տիգրանին (II-ին) ճշտորեն հայտնաբերել հակառակորդի ուժերն ու խմբավորումները, ինչպես և հռոմեական բանակի մտադրությունը» (էջ 84)։ Իսկ 106 էջում բնութագրելով Տիգրան II-ին որպես պետական գործիչ և զորավար, նա գրում է. «Մարտ սկսելուց առաջ Տիգրանը կազմակերպել է մանրազնին հետախուզություն՝ հակառակորդի ուժերը և կազմը հայտնաբերելու համար» (էջ 107)։ Դարանաղիի Անի բերդի գրավումը պարսիկների կողմից Ս. Սարգսյանը նկարագրում է այսպես. «Այնուհետև շարունակում են արշավը Դարանաղի գավառի Անի քաղաքի վրա, բայց չեն կարողանում գրոհով վերցնել, ուստի պարսից զորքերը բերդի պարիսպների վրա մարդիկ են բարձրացնում, որոնք քանդում են պարիսպները և զորքերը ներս են խուժում Անի բերդը» (էջ 161)։ Եթե այսքան հեշտ էր բերդի պարիսպները քանդել, էլ ինչու էին պարսիկները գրոհում։

Աշխատության մեջ ցույց չեն տրված հայերի ռազմական ստրատեգիայի առանձնահատկությունները, սխալ են մեկնաբանված տակտիկայի զարգացումն ու ռազմական մտքի ծագումը։ Ոչ քննադատաբար և աղավաղված ձևով են օգտագործված սկզբնաղբյուրները։ Շատ են քաղաքագրությունները, չի շրջաբաժանված ռազմական արվեստի, ինչպես նաև պատերազմների պատմությունը։ Պատերազմների և ճակատամարտերի պատմությունը շարադրված է ոչ ճիշտ և պարզունակ։

Հ. ԱՂԱԲԵԿՅԱՆ